

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Քաղաքացիական իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1903/B07 <<Արժեթղթերը քաղաքացիական իրավունքում>>

Որակավորման
աստիճան՝ բակալավրի կրթական աստիճան

Կազմեց՝ իրավ. գիտ. թեկնածու – Լ. Մելիքջանյան

Ծրագրի ներածություն

Արժեթղթերը քաղաքացիական իրավունքում (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 8 սեմինար, 28 ժամ ինքնուրույն աշխատանք)
6-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արժեթղթերի տնտեսական և իրավական բնույթը, արժեթղթերի շուկան և նրա պետական կարգավորման նշանակությունն ու նպատակը, արժեթղթերի շուկայի մասնակիցների իրավական կարգավիճակը, ինչպես նաև արժեթղթերի առանձին տեսակների շրջանառության առանձնահատկությունները:

Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կունենա՝

(գիտելիք և իմացություն)

- արժեթղթերի էմիսիայից,
- արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց կարգավիճակից,
- արժեթղթերի առանձին տեսակների առանձնահատկություններից,

Ունակ կլինի՝

(բուն մասնագիտական ունակություններ)

- ներկայացնել արժեթղթերի տարբեր տեսակները, դրանցից յուրաքանչյուրի վավերապայմանները և կիրառման բնագավառները,
- ընկալել էմիսիոն արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ընթացակարգը,
- վեր հանել օրենսդրական թերությունները և առաջարկություններ կատարել ՀՀ արժեթղթերի մասին օրենսդրության կատարելագործման վերաբերյալ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված է 2 ընթացիկ բանավոր ստուգում, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ստուգման ընթացքում յուրաքանչյուր ուսանողի տրվում է 3 հարց, որոնք կազմվում են նախօրոք ուսանողներին տրված հարցաշարից: Յուրաքանչյուր հարց գնահատվում է 3 միավոր: Առաջին ընթացիկ ստուգումն ընդգրկում է 1-3-րդ թեմաները և 4-րդ թեմայի 1-4-րդ հարցերը, իսկ երկրորդ ընթացիկ ստուգումն ընդգրկում է 4-րդ թեմայի 5-7-րդ հարցերը և 5-6-րդ թեմաները:

Դասընթացի նկարագրություն, բովանդակություն

**Թեմա 1 Արժեթղթերի հասկացությունը, նշանակությունն ու դասակարգումը
(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**

1. Արժեթղթերի հասկացությունն ու հիմնական հատկանիշները: 2. Արժեթղթերի նշանակությունը: 3. Արժեթղթերի մասին օրենսդրությունը: 4. Արժեթղթերի դասակարգումը: 4. Ոչ փաստաթղթային արժեթղթեր: 5. Էմիսիոն արժեթղթեր:

Հարցեր 1-5 - Անցկացվում է ներածական դասախոսություն՝ ուսանողներին ներկայացնելով առարկայի ուսումնասիրության արդիականությունը և նրանց հիմնական ուշադրությունը բևեռելով խնդրահարույց հարցերի վրա: Ուսանողներին տրամադրվում են առարկայի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները:

Հարցեր 1, 3-5 – Սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ:

Հարցեր 2-3 - ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (աղբյուրը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2007, N 59 (577), 31.10.2007թ.):

**Թեմա 2. Արժեթղթերի թողարկումը և տեղաբաշխումը
(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**

1. Արժեթղթերի թողարկման էությունը: 2. Արժեթղթերի թողարկման գործընթացի փուլերը՝ ա) էմիսիոնի կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունում, բ) արժեթղթերի թողարկման հայտարարագրի գրանցում, գ) արժեթղթերի և դրանց սերտիֆիկատների պատրաստում, դ) արժեթղթերի տեղաբաշխում, ե) արժեթղթերի տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին հաշվետվություններ:

Հարցեր 1-2- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ տրամադրված դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2007 N59 (577), 31. 10.):

Հարցեր 1-2 - Անցկացվում է սեմինար պարապմունք - խնդրահարույց հարցերի քննարկմամբ:

Հարցեր 1-2 - ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (աղբյուրը՝ «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ» ՆՕԱ-01/007Լ, 13.06.2012թ., Առևտրի ընդհանուր կանոններ, ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա՝-01/006Լ, 13.06.2012թ.):

**Թեմա 3. Արժեթղթերի շուկա
(2 ժամ դասախոսություն)**

1. Արժեթղթերի շուկայի հասկացությունը և պետական կարգավորումը: 2. ՀՀ կենտրոնական բանկի դերը արժեթղթերի շուկայի պետական կարգավորման բնագավառում: Հարցեր 1-2 - Անցկացվում է դասախոսություն, այնուհետև հանձնարարվում է ինքնուրույն աշխատանք: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ տրամադրված դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, <<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ օրենք, <<Անդամակցության և շուկային մասնակցության կանոններ>>, ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա-01/008Լ, 13.06.2012թ.):

Թեմա 4. Արժեթղթերի շուկայի մասնակիցներ (3 ժամ դասախոսություն)

1. Արժեթղթերի շուկայի հատուկ սուբյեկտները: 2. Ներդրումային ընկերություններ: 3. Բրոքերային և դիլերային ընկերություններ: 4. Արժեթղթերի հավատարմագրային կառավարիչներ և պահառուներ: 5. Ֆոնդային բորսա: 6. Կենտրոնական դեպոզիտարիա: 7. Արժեթղթերի շուկայի այլ մասնակիցներ:

Հարցեր 2-5 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ տրամադրված դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, <<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ օրենք):

Հարցեր 2-3 - ինքնուրույն աշխատանք (պահանջվող նյութը՝ դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը <<Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները>>, կանոնակարգ 4/07 հաստատելու մասին, թիվ 113-Ն ՀՀԳՏ 2008.05.15/16(290) Հոդ. 161, 08.04.2008թ.):

Թեմա 5. Արժեթղթերի շրջանառությունը և դրանց կապակցությամբ կնքվող գործարքները (3 ժամ դասախոսություն)

1. Արժեթղթերի շրջանառության մասին ընդհանուր դրույթներ 2. Էմիսիոն արժեթղթերով կատարվող գործարքները: 3. Ֆոնդային բորսաներում արժեթղթերի հրապարակային առուվաճառքի կանոնները: 4. Ռիսկերի բաշխումը արժեթղթերով գործարքներ կատարելիս:

Հարցեր 2-3 - Անցկացվում է դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ տրամադրված դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, << Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ>> ՆՕՍ-01/007Լ, 13.06.2012թ, <<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ օրենք):

Հարցեր 1-2- ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (աղբյուրը՝ «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ»>> ՆՕՍ-01/007Լ, 13.06.2012թ):

Թեմա 6. Արժեթղթերի առանձին տեսակների շրջանառության առանձնահատկությունները (8 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)

1. Վճարային արժեթղթեր՝ (մուրհակ, չեկ): 2. Ներդրումային արժեթղթեր՝ (պարտատոմս, բաժնետոմս): 3. Տիտղոսային արժեթղթեր՝ (կոնոսամենս, երկակի պահեստային վկայագիր, հասարակ պահեստային վկայագիր): 4. Բանկային վկայագրեր: 5. Այլ արժեթղթեր:

Հարցեր 1-5-Անցկացվում է դասախոսություն, ընթացքում ուսանողների հետ համատեղ վերլուծելով արժեթղթի յուրաքանչյուր տեսակի վավերապայմանները: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ տրամադրված դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք)

Հարցեր 1-5 - Սեմինար պարապմունք - ուսանողները համեմատականներ են անցկացնում իրավական տարբեր համակարգերի միջև, համատեղ քննարկումների արդյունքում ներկայացնում դրանցից յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները:

Հարցեր 1-5 - ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (աղբյուրը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք):

Գրականություն

1. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2007, N 59 (577), 31.10.2007թ.
2. «Սակագների մասին» կանոններ, ՆՕՍ-01/019Լ, 23 օգոստոսի 2012թ
3. «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ», ՆՕՍ-01/007Լ, 13.06.2012թ.
4. «Շուկա ստեղծողի կանոններ», ՀՖԲ-01/097Լ, 30.12.2010թ.
5. «Առևտրի ընդհանուր կանոններ», «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-01/006Լ, 13.06.2012թ.
6. «Անդամակցության և շուկային մասնակցության կանոններ», «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-01/008Լ, 13.06.2012թ.
7. ՀՀ ԿԲ Խորհրդի որոշումը «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին, թիվ 140-Ն, ՀՀԳՏ 2008.06.02/18(292) Հոդ. 175, 22.04.2008թ.

8. ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը <<Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները>> կանոնակարգ 4/07 հաստատելու մասին, թիվ 113–Ն ՀՀԳՏ 2008.05.15/16(290) Հոդ. 161, 08.04.2008թ.
9. Մեղրյան Ս. Արժեթղթեր (դասախոսություն), ԵՊՀ, Երևան 2001
10. Մելիքջանյան Լ.Ռ. Սուրհակի քաղաքացիաիրավական կարգավորումը, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2009
11. Դասախոսությունների տեքստ` էլեկտրոնային տարբերակով
12. Семенкова Е.В. Операции с ценными бумагами: российская практика. М. 1997
13. Рубцов Б.Б. Мировые рынки ценных бумаг. М. 2002
14. Маренков Н.Л. Ценные бумаги, М. Московский экономико-финансовый институт. Феникс. 2005
15. Мишарев А.А. Рынок ценных бумаг. СПб.: Питер, 2007
16. Хоменко Е.Г. Правовое регулирование рынка ценных бумаг. М. 2008

Արժեթղթերը քաղաքացիական իրավունքում առարկայի հարցաշար

1-ին ընթացիկ ստուգման Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

1. Արժեթղթերի հասկացությունը և հատկանիշները
2. Արժեթղթերի նշանակությունը
3. Արժեթղթերի մասին օրենսդրությունը
4. Արժեթղթերի շուկայի մասին օրենք
5. Արժեթղթերի դասակարգումը
6. Ոչ փաստաթղթային արժեթղթեր
7. Էմիսիոն արժեթղթեր
8. Արժեթղթերի թողարկումը
9. Արժեթղթերի թողարկման փուլերը
10. Արժեթղթերի տեղաբաշխում
11. Արժեթղթերի շուկա
12. Արժեթղթերի շուկայի մասնակիցները
13. Բրոքերային ընկերություններ
14. Դիլերային ընկերություններ
15. Արժեթղթերի հավատարմային կառավարիչները
16. Արժեթղթերի պահառուներ
17. Ինքնակարգավորվող կազմակերպություններ
18. Արժեթղթերի շուկայի մասին օրենքի հիմնական նպատակը և կարգավորման առարկան
19. Ազդագիր
20. Ներդրումային ծառայություններ
21. Ներդրումային ընկերություններ
22. Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան
23. Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցումը
24. Ներդրումային ընկերության գրանցումը և լիցենզավորումը
25. Մասնագիտական որակավորման պահանջը
26. Նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնությունը
27. Նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության մերժումը
28. Ներդրումային ընկերությունների ղեկավարների նկատմամբ պահանջները
29. Ներքին աուդիտ
30. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց պարտականությունները
31. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանները
32. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի պարտականությունները
33. Հաճախորդների միջոցների հաշվառումը և պաշտպանությունը
34. Ներդրումային ընկերությունների գործունեության տնտեսական նորմատիվները
35. Կանոնադրական կապիտալ և ընդհանուր կապիտալ
36. Ֆինանսատնտեսական գործունեության տարեկան աուդիտ, հաշվետվություն
37. Ներդրումային ընկերության վերակազմակերպում, միացում
38. Ներդրումային ընկերության լուծարման հիմքերը
39. Լուծարման հանձնաժողով
40. Լուծարման դեպքում պահանջների բավարարման հերթականությունը

41. Ծառայողական տեղեկատվությունը

2-րդ ընթացիկ ստուգման Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

1. Ֆոնդային բորսա
2. Կարգավորվող շուկայի գործունեության լիցենզիան
3. Օպերատորի գրանցումը և լիցենզավորումը
4. Օպերատորի կառավարումը
5. Կարգավորվող շուկայի կանոնները
6. Օպերատորի և ԿԲ-ի համագործակցությունը և օպերատորի հաշվետվությունները
7. Կենտրոնական դեպոզիտարիան
8. Կենտրոնական դեպոզիտարիայի գործառույթները
9. Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարումը
10. Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումը և լիցենզավորումը
11. Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվետվությունները և ծառայությունների գները
12. Արժեթղթերի պահառության համակարգը: Արժեթղթի հաշիվ
13. Ֆոնդային բորսայում հրապարակային առուծախի կանոնները
14. Ֆոնդային բորսայում արժեթղթի վաճառքի ազդագիր, ցուցակում և գնանշում
15. Բորսային գործարքի գրանցումը, տեղեկատվությունը
16. Արժեթղթերի առուծախի պատվերների ձևեր
17. Ֆոնդային բորսայում արժեթղթով գործարքի փուլերը
18. Արժեթղթերի նկատմամբ իրավունքների փոխանցման կարգը գնորդին
19. Ֆոնդային բորսայում կատարվող գործարքների սահմանափակումները
20. Արժեթղթեր հանձնելու առաջարկ /տենդեր/
21. Ինսայդերների ցուցակ և ինսայդեր
22. Ներքին տեղեկություններ, դրանց օգտագործման կարգը
23. Հաշվարկային համակարգի անդամները
24. Վերջնահաշվարկի կատարման ապահովում
25. ԿԲ-ի վերահսկողությունը և ստուգումները
26. Արժեթղթերի շուկայում նախազգուշացման և տուգանքի կիրառումը
27. Պատասխանատվությունը տեղեկությունների խեղաթյուրման համար: Ներդրումային ընկերությունների ղեկավարների պատասխանատվությունը
28. Ժամկետների կասեցումը և փոփոխությունների գրանցումը
29. Մուրհակի էությունը և տեսակները
30. Մուրհակի շրջանառությունն ապահովող ինստիտուտները /ավալ, ինդոսամենտ/
31. Մուրհակի վավերապայմանները
32. Չեկի էությունն ու վավերապայմանները
33. Պարտատոմսի էությունն ու տեսակները
34. Պետական պարտատոմսեր
35. Բաժնետոմսի հասկացությունը, վավերապայմանները, տեսակները
36. Բաժնետոմսի թողարկման առանձնահատկությունները
37. Կոնոսամենտի հասկացությունը և վավերապայմանները
38. Պահեստային վկայագիր
39. Բանկային գրքույկ
40. Բանկային սերտիֆիկատ
41. Ածանցյալ կամ այլ արժեթղթեր